

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐԻՋԵՏԱՐԵՐ՝ ԲՈԼՈՐ յԵՐԿիրների միացե՛ն,

ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՀԱՅՈՐ II




ՀԱՅՈՐ
ԲԱԳՈՒ-Բ
ՀԱՅՈՐ
ԶԱԿՈՒՐԻԿՈՒ

ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎԱԼԵՑՈՒՆ № 75

Կ. ՊՈՒԽԻ 1923

891.99
5-47



Шифр { T-34
сек

Записана
в инвентар.
книгу под
№ 3283

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

891.99

S-47

Ա/

Պրոլետարիատը բոլոր յերկրների — միացե՛ք,

ՎԱՀԱՆ ՏԵՐԵՎԱՆ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

=====

ՀԱՅԱՆ II



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԻ
Վագոն-Բիблиոթեկ
№ 2
Ը ԶԱԿԴՈՒՐՈՒԾՈՒ
ՀԱՅԱՆ

№ 75 ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ № 75
Կ. ՊՈՒԽԻ 1923

88-108
ՀԲ-2

22.08.2013

40-7

555

58525

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՍԱՏՈՒՐՅԱՆ ՎԱՐԴԻՔ
Կ. ՊՈԼԻԽ



497
45



ԳԻՇԵՐ ՅԵՎ ՀՈՒՇԵՐ

Свой подвиг ты совершила прежде тела,
безумная душа . . .

Е.Баратынский.



1 ՃԱՄԲԱԲԱԺԱՆ

Կանգնած եմ նորից ահեղ անտառում
ճանապարհների բաժանումի մոտ.
հանգչում են վերջին կրակներն աղոտ,
ու մութն ե կրկին իշնում ու փռվում...

Անցած որերըս շարքերով դալուկ
շողում են աხա յեվ անհետանում.
ըզիտեմ կյանքը ինձ ո՞ւր ե տանում.—
ամեն ինչ հարց ե, մթին հանելուկ:

Ծիծում են կուրծքըս քամիները բիրտ,
հազար ծայներով անտառն ե խոսում.
յես ուղիների լարիրինթոսում,
յեվ վողջը՝ ոտար, վողջը՝ խստասիրտ:

Կանգնած եմ նորից ահեղ անտառում
մութ ուղիների բաժանումի մոտ.
պարզված ե սիրտըս հեռուն ու հեռուն,
այլում ե հոգիս անհուն մի կարոտ...

Հեռու դղյակի քնքույշ թագուհին
ծաղիկների մեջ, լուսեղեն այգում
զջում ե յեվ ինձ կանչում ե կրկին
ցերեկը տրտում, գիշերը անքուն
հեռու դղյակի քնքույշ թագուհին:

Կար մի դյութական ուրիշ ժամանակ,
յերբ նրա կանչի հրաշքին հլու՝
յես թողնում եյի որերըս մենակ
յեվ այս աշխարհից սլանում հեռու...
10 Կար մի դյութական ուրիշ ժամանակ...

Գինովցած մի այլ կյանքի խնդությամբ՝
թողնում եյի այս վայրերը թառամ,
սլանում, վորպես լուսեղեն մի ամպ,
յեվ փարում նրան, փայտայում նրան,
15 զինովցած մի այլ կյանքի խնդությամբ:

Հիմա չըգիտեմ այն լուսե ուղին,
բայց զգում եմ դեռ, զգում եմ ինչպես
հեռու դղյակի քնքույշ թագուհին
կանչում ե ինձ միշտ, կանչում ե, բայց յես
20 արդեն չըգիտեմ այն լուսե ուղին...

3 ԱՇԽԵՆ

Մեզ ե, անձրեվ ու մշուշ
իմ այգում մերկ.
դառը թախիծ ու վերհուշ,—
անվախճան յերգ:

Հողմն ե լալիս թփերում
մերկ ու վտիտ.
ցուրտ ե, խավար ե հեռուն
յեվ անժպիտ:

Սիրուս թախծոտ ու խոցոտ,
10 հոգիս հիվանդ,—
ո՞վ արեվոտ ու բոցոտ.
կըվառե խանդ:

Տունըս ավեր ու խավար,
որըս անլույս,
15 ո՞վ կըվառե վոսկեվառ
յերազ ու հույս...

Պատուհանիս տակ լալիս ե կրկին
թափառիկ յերգչի յերգը ցավագին,—
տխուր այդ յերգը վաղուց եմ լսել,
կարծես թե յես եմ այդ յերգը հյուսել,
կարծես թե յես եմ լալիս այդ յերգում,
կարծես թե քեզ եմ կարոտով յերգում...

Սեվ զեշե՛ր, յեվ հուշե՛ր յեվ խոհե՛ր անհամար,
մոռացված յերազներ՝ շուշաններ թառամած,
խնդություն հեռացած յեվ անցած, յեվ անդարձ,—
տրտմություն մեեավո՞ր, միյածայն, միյալար...

Մշուշներն են սահում... Սոսավում ե ուռին...
իմ որեր անհատնում, անխնդում յեվ անտուն,
ցնորքնե՛ր լուսավառ, ընդունայն, ապարդյուն,
մոռացված ե հավետ արեվոտ ձեր ուղին...

Սեվ խոհեր անսպա՛ռ, անհամա՛ր, անհամա՛ր,
¹⁰ սեվ զիշե՛ր, յեվ հուշե՛ր, յեվ հուշե՛ր ընդունայն,
յերազներ իմ անդարձ—ծաղիկներ իմ գարնան.
ինչ կանչով ծեզ կանչեմ. ինչպես լամ ծեզ համար:

* * *

¹ Հնչում ե անվերջ աշնան թախիծով
դաշնամուրն այնտեղ, պատի հետեւում.
հարազատ ե ինձ այդ յերգը հեծող—
իմ անանց ցալով մեկն ել ե ցալում:

⁵ Աշնան տիսրահեծ անձրեվի նըման.
անձրեվի նըման լալիս են անվերջ
այն հնչունները մեղմ ու միյածայն
պատի հետեւում յեվ իմ հոգու մեջ...

7 ԻՆՔՆՈՐՈՌՈՒՄ

¹ Գիշեր ե իջել. լուել են բոլոր
աղմուկները չար, խոսքերը պատիր,
ջրերը մեղմիվ յերգում են որոր,
— սիրտ իմ, հանդարտի՛ր...

⁶ Հանգչում ե վաղուց անտուն ու մոլոր
թափառականը մեն ու տարագիր,
աստղերը խմբով յերգում են որոր,
— սիրտ իմ, հանդարտի՛ր...

Լաց վերջին լացըդ, սի՞րտ իմ մենավոր,
¹⁰ վերջին արցունքը— հեկեկա՝ թափի՛ր,—
յերազ, յերգ ու սեր, որո՞ր ու որո՞ր,
— սիրտ իմ, հանդարտի՛ր...

* *

¹ Անվերջ գիշերի մուայլ վիհերում
իմ մենակ սիրտն ե ցավագին նչում.
յես մոլորվել եմ այս մութ աշխարհում,
յեվ ինձ խավարից վոչ վոք չի կանչում:

² Գիշերն ե փուլել իր թեմերը մութ,
գիշերն ե գերել իմ սիրտը ցաված.—
Վորտեղ վորոնեմ յերջանկության սուտ
յեվ ինչպես զտնեմ վերադարձի լաց:

³ Հողմն ե հեկեկում անունջ վիհերում,
¹⁰ ո, անհուն գիշեր, քեզ ո՞վ ե փուել.
ինչո՞ւ յե շուրջըս աշխարհը լուռում,
ո՞վ ե իմ հոգու լույսերը մարել...

9 ՎԵՐԶԱԼՈՒՄԻՆ

¹ Բարակ ամպերը մաղում են վոսկի,
զրերը անուշ հեքյաթ են ասում.
կարոտ ե սիրտըս մտերիմ խոսքի,
հոգնատանջ հոգիս բախտ ե յերազում...

² Լոին դաշտերի հանգիստը խոսուն
մի հեզ տիսրության լույս ե ըստվերում.
խաղաղ զերի վճիռ ալմասում
դողում ե վոսկե ամպերի հեռուն:

Յեվ իմ սրտի մեջ, այն խավարում ել,
¹⁰ մի քաղցր վիշտ ե մեղմաբար խոսում.
մեկը այնտեղ իր հեռուն ե վառել,
վորպես յերկինքը զրի ալմասում:

Քո քաղցր վիշտը, սիրտ իմ մենավոր,
քո վիշտն ե փուված անհուն աշխարհում,
¹⁵ քո սերն ե վառված յեվ պայծառ, յեվ խոր,
քո խենթ կարոտն ե ամեն տեղ լուռում...

¹ Տաղտկահնչյուն ու միյածայն որերն իրենց յերգն են յերգում. — միյայնություն, դու յես անձայն ցավըս որրում քո որբերգում:

Յեվ անցյալի խարեյական ցնորքներն են մեղմ որորվում,
նոքա անդարձ, նոքա ջրկան, նոքա մեռան հեռու հեռվում:

⁵ Վհատումն ե հոգիս զրկել, անհուսությունն անհուն փուզել, —
ի՞նչ խոռվերով, ի՞նչափս յերգել յեվ ի՞նչ սրտով հիմա սիրել:

Ել ի՞նչ հուսով սիրտըս հուզեմ, ի՞նչ յերազով ամոքեմ ինձ
յեվ վո՞ր կողմից բախտ սպասեմ—անվախճան յերգ—վիշտ ու թախիծ.

¹⁰ Անցե՛ք, հուշեր իմ ապարդյուն, դարձե՛ք ընդմիշտ մոռացված եզ,
անհուն փուփիր, սեվ լոռություն, միյայնություն իմ հոգու մեջ:

11 ՀՈԳՆԱԾՈՒԹՅՈՒՆ

¹ Յես մի ճամբորդ եմ մթնում մոլորված,
ու հոգնած սիրտըս դարձել ե խոնարհ. —
չեմ ուզում կանչել ցնորքըս մեռած,
յերազել գալիք որերի համար:

⁵ Յես չար հոսանքով մղված եմ հեռուն,
յեվ անվերադարձ փակված ե ուղին.
մի վորբ մանուկ ե հոգիս մոլորուն,
մատնված մութին յեվ մառախուղին:

Մի անմայր մանուկ, հեկեկանքներից
¹⁰ հոգնած ու բեկված — ննջել և ուզում.
մի՛ վրդովեք դուք, մի՛ տանջեք նորից,
մի՛ տանջեք նորից — հանգել ե ուզում...

¹ Դառնություն ե լցված ու թախիծ
քեզ ոտար պոետի յերգերում.—
վո՞ր կողմից յեկար դու, վորտեղի՞ց
նետեցիր քո նետերն իմ հեռուն:

⁵ Մթամած որերիս տանջանքում
արեգակ տենչացի, յեվ ահա,
քո խավարն ե փուլած իմ հոգում,
քո գգվանքը յեվ չար, յեվ ազահ...

¹⁰ Ճշում եմ՝ հեռացի՞ր, բայց արդեն
քմծիծաղն ե ծաղկում քո դեմքին.
¹⁵ ո՞վ ես դու, վոր անզոր եմ քո դեմ
յեվ գերի դիվային քո կամքին...

Դառնություն ե լցված յեվ թախիծ
քեզ ոտար պոետի յերգերում.—
²⁰ վո՞ր կողմից դու յեկար, վորտեղի՞ց
նետեցիր քո նետերն իմ հեռուն...

¹ Զըգիտեմ՝ վորտեղի՞ց և գալիս
զութակի հեկեկանքը տրտում
յեվ լալիս ե անվերջ ու լալիս
յեվ անվերջ ծավալվում իմ սրտում:

⁵ Անհույս ե այդ յերգը, վորպիս մութ
գիշերըս, գիշերըս աշունքվա.—
կարծես՝ սուգ են անում յեվ անգութ,
յեվ դառը լալիս են իմ վրա...

Այնքան վիշտ կա անհույս այդ յերգում,
¹⁰ այնքան դառը տանջանք յեվ թախիծ,
յեվ անվերջ, հավիտյան ե յերգում
հեկեկում այդ յերգը այնուղից...

¹⁵ Յեվ ձուլված ե արդեն իմ հոգուն,
իմ բոլոր որերին ե ձուլված.
²⁰ տրտմություն ե իմ շուրջն ու բեկում,
իմ հոգում և անվերջ սուգ ու լաց...

Այս, բոլոր կողմերում ե թախիծ,
ամեն տեղ և փուլած տրտմություն,
յեվ արդյոք՝ վորտեղի՞ց, վորտեղի՞ց
²⁵ սպասեմ ավետիք ու խնդում...

¹ Յես գիտեմ հիմա. — ամենքի նըման
մի սովորական աղջիկ եյթ դու.
յես եյթ պճնել փայլով դյութական
գորշ պատկերը քո կյանքի յեվ հոգու:

⁵ Յես եյթ լցրել տիրությամբ սիրուն
քո փոքրիկ սրտի դատարկը անգույն,
լուսավառել իմ ըղձերի հեռուն
չնչին որերիդ մանրահոգ կյանքում:

ու գիտեմ հիմա. — մի սովորական
¹⁰ աղջիկ եյթ դու, նըման ամենքին. —
ա՛խ, յերանի չեր բյուր յեվ բյուր անգամ,
վոր կույր ու անգետ լինելի կրկին:

* *

¹ Մարդոց ժխորը թողնեմ հեռանամ,
լիք-լցված սրտով նատեմ միյայնակ,
Դրկեմ վարդերըս դատուկ, դժգունակ, —
մեռնող վարդերըս փայփայեմ ու լամ:

⁵ Այս ցուրտ հյուսիսի թախծալի աշնան
անձրեվոտ որվա մութ յերկնքի տակ,
ամայի դաշտում նատեմ միյայնակ, —
մեռնող հուշերըս փայփայեմ ու լամ...

Անձիր աշխարհի դժկամ ու դաժան
¹⁰ ուղիների մեջ իմ սերը կորած
ել չըվորոնեմ: Մթնում մոլորված՝
դառը խոհերըս զրկեմ, հեկեկամ,
անվերջ հեկեկամ...

Գիշեր ե յեվ լուսւթյուն,
լուսւթյուն ե իմ հոգում,
վոչ անուրջ կա ապարդյուն,
վոչ սեգ ըղձանք ու խոկում...

⁵ Յուրատ ե աշխարհն ու աղոտ,
աշուն՝ անձրեվ ու մշուշ,
սեփակոր են ու ցափոտ
յեվ մուածում, յեվ վերհուշ...

Դուքս եմ գալիս յես փողոց,
¹⁰ զրջում անվերջ ու տրտում.—
բացված ե մի թունոտ խոց,
մի մութ շիրիմ իմ սրտում:

Մի կանչեք ինձ, հույսի նոր
խոսքերով ինձ մի դյութեք,
¹⁵ թող իմ կյանքը մենավոր
պատե անանց մութ ու մեգ...

Համբ ե յերկիրն ինձ համար
յեվ ցուրտ, յեվ լուռ, յեվ ունայն,
հոգիս անհույս ու խավար,
²⁰ սառը, վորակես գերեզման...

Վոչ անուրջ կա ապարդյուն,
վոչ սեգ ըղձանք ու խոկում.—
գիշեր ե յեվ լուսւթյուն,
լուսւթյուն ե իմ հոգում...

¹ Մարիր լույսը մշուշոտ,
սեվ հուսերըդ արծակիր,
դու իմ դահիճ, դու իմ քույր,
դու իմ ընկեր տարագիր,
⁵ ել մի՛ կրկնիր, մոռացիր
խոսքերն անմիտ ու պատիր,—
լուռ տանջանքով, խավարով
փայտայիր ու փարատիր...
փարվիր, փարվիր ինձ ամուր,

¹⁰ մեղսոտ սիրով սիրիր ինձ,—
մեխիր սուրբդ կուրծքս բաց,
թող թույն լինի յեվ թախիծ:
Սրդեն զիշեր, արդեն մութ,
անանց խավար ե արդեն,—

¹⁵ յեղիր հզոր ու անգութ,
չար ժպիտով յել իմ դեմ...
Յերգի՛ր խավար յեվ անկում,
ինձ տանջի՛ր յեվ ամոքի՛ր,—
այրի՛ր սիրտըս, թող լինի

²⁰ այնտեղ ավեր ու մոխիր:
Յուրատ համբուլյով համբուրիր,
այրիր բոցով նրա ցուրտ—
վերջին սիրով անպատիր,
անվախճան ու անհագուրդ...

²⁵ Իմ ցաւագին աղոթքին
ունկնդրի՛ր ու յերեվա՛,
քո հաղթության ու սիրո
կնիքը դիր իմ վրա...

¹ Դանդաղ ե քայլում հոգնատանց իմ ձին
յեվ տաղտկալի յե այս ուղին մոլոր.—
չըհիշե՛ւ, մերժե՛լ տենչերըս բոլոր
յեվ ցնորքներըս, վոր ինձ խաբեցին:

⁵ Անհուսություն յեվ անվերջ վհատում
յեվ դառնություն ե լցված իմ հոգում.
փուփած ե խավար յեվ մահ, յեվ անկում.—
ավերվա՛ծ ես դու, հայրենական տուն...

Վորքան ել գիշերն ահավոր իջնի,
¹⁰ յեվ ուր ել գնամ՝ զլուխ դնելու
հարազատ մի հող ես չեմ գտնելու
սեվ ճանապարհիս որերում դժնի:

Տանջանք են ու խոց հուշերըս բոլոր,
մտքերըս ամեն—անամոք ցալեր.
¹⁵ Խավար ե շուրջըս յեվ մահ, յեվ ալեր,
մութով ե լցված իմ ուղին մոլոր...

Ու քանի գնում՝ այնքան անհատնում
այնքան ցավո՛տ են խոներըս անհույս.—
²⁰ դու չըկաս արդեն, դարձել ես զրույց,
յերազ ես դարձել—հայրենական տուն...

Ահ, այս ցուրտ յերկրի անհայտում անհուն
ընկնել յեվ կորչել, յեվ ննջել հավետ,
վոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,
ավերված յերազ—հայրենական տոնւն...

¹ Ինձ չես սիրում, ուրիշին,
ուրիշին ես սիրում դու—
յեվ անզոր ե ու չնչին
քո դեմ տանջանքն իմ հոգու:

⁵ Դու անցնում ես ամեն որ,
անցնում՝ ինձ չես նկատում—
յեվ դարձել եմ յես սովոր
քամահրանքիդ անհատնում:

Քեզ խոնարհ՝ ամեն անզամ
¹⁰ զլուխ եմ տալիս խոնարհ,
բայց յես աղքատ եմ այնքան,
այնքան թշվառ քեզ համար:

Ամենքինն ես, իմը չես,
ամենքին ես սիրում դու.
¹⁵ ախ, վոսկով են գնում քեզ,
անհաս ցնորք իմ հոգու...

¹ Նուրբ ըստվերները փուփում են քնքույշ,
կապույտ խավարն ե յերկինքը պատում.—
անուշ վարդերից մնաց միյայն փուշ
յեվ ցնորքներից՝ վիշտ ու վհատում...

⁵ Ու մենք ուզեցինք դարձյալ հանդիպել,—
ահա—մեր հոգում խավար ե յեվ մահ.
Ել ի՞նչ յերազի պատրանքով խարվել
յեվ ի՞նչ խոսքերով զրուցել հիմա...

¹⁰ Քո արցունքները թափիվում են ահա,
յեվ դառն ե լացըդ հուսահատական.—
քեզ ի՞նչ հավատով սիովիմ հիմա,
ի՞նչ արցունքներով հիմա հեկեկամ...

21 ԱՆԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

¹ Մենք բաժնված ենք: Որերի փոշին
դեռ չի աղոտել քո դեմքը գունատ.
բայց յես ոտար եմ արդեն այն հուշին,
ուր վեհ եր յերազն ու բախող ժլատ:

⁶ Սառն աչքերով եմ նայում յես հեռվում
մեռած որերիս ցնորքին հիմա.—
ուրիշից լսած մի յերգ ե թվում
ու թեյեվ քաղցր ե, բայց իմը չե նա:

¹⁰ Մենք մնաս բարով չամինք իրարու,—
«ի՞նչ կարիք իզուր տանջիլել ու տանջեր:
մեզ կյանքը նստեց միմիյանցից հեռու,
յեվ մենք չուզեցինք մեկ մեկու կանչել:»

¹⁵ Տարիներն անցան, յեվ հին որերին
նայում եմ ահա անտարբեր սրտով,
յեվ, վորպես գերին հլու իր բեռին,
տանում եմ կյանքի որերն անվըրդով:

²⁰ Ել վոչ մի կանչի յես ձայն չեմ տալիս
ու յեթե հանկարծ խոսքերըդ հնչեն,
յեթե տեսնեմ քեզ վերադառնալիս,—
քեզ ինչպես կանչեմ.—յես այն չե՛մ, այն չե՛մ...

¹ Ցուրտ անձրեզն ե միգում հեկեկում,
տխրությունն ե յերգում իմ հոգում:

Ապագա յեվ անցյալ, յեվ ներկա խառնվել են իրար,
խավարել են որերն արեվկա յեվ խելառ:

⁴ Վիճակիս լծի տակ որերում
յես շըջում եմ մենակ ու լրում:

Չեմ հիշում, մոռացել եմ արդեն այն խոսքերը բոլոր.—
հիմա կույր, հիմա համր եմ քո դեմ ու մոլոր...

¹⁰ Ցուրտ անձրեզն ե միգում հեկեկում,—
տխրությունն ե յերգում իմ հոգում...

¹ Այսոր գթանք իրարու,—
խեղճ լինենք ու չամաչենք,
բախտ ըլտենչանք ու հեռու
տարիները ըլհիշենք:

⁵ Լոենք միյայն մի մեղմող
լրությունով ու հանգչենք,—
բանանք սրտերըս մեռնող,—
վորք լինենք ու չամաչենք:

Սիրենք իրար ու ներենք,—
¹⁰ չընախատենք մեկ մեկու,
ել չար սիրով չըսիրենք,
անչար լինենք յես ու դու:

Այսոր գթանք իրարու,
այսոր իրար չըտանջենք,
¹⁵ լինենք անչար ու հլու,—
հեկեկանք ու չամաչենք...

¹ Եմ սիրտը միշտ
մի անանուն
ցավ և տանջում,

² անանց մի վիշտ
³ խորը թագուն
յեվ անհնչյուն:

Կա մի մորմոք
մի վիշտ անհուն,
վոր չի ննջում,

¹⁰ Կա անամոք
մի տիրություն
ամեն ինչում...

¹ Մարել ես արդեն, մեռել ես հավետ,
հեռավոր կյանքի յերազների բոց,—
լսավարն ե զրկել հոգիս ալեկոծ,
յեվ դեպի լույսը ըլկա արահետ...

² Անդարձ որերի ցնորական յերգ,
դու վաղ ես լուել իմ ցաված հոգում.—
յես ինձ եմ թաղում յեվ չեմ հեկեկում.—
տանջանքի զիշե՞ր—յեվ ըլկա յեղերք:

Իզել են մթին խոհերը վրաս,
¹⁰ սառն և հիմա իմ զիշերը անափ.—
ել ըլկա վոչ մի լուսեղեն տագնապ.
յեվ վոչ մի յերազ, յեվ վոչ մի յերազ...

¹ Մեղքի մթին քարայրից,
ուր հսկում ես դու անքուն,—
մութ ցանկությամբ դյութիր ինձ
յեվ փայտայիր ինձ թագուն:

⁵ Մեվ գիշերով ինձ կանչիր
ամայի խուց ու այնտեղ
հեզ մարմինըս չար տանջիր
գգվանքներում քո ահեղ:

Յեվ մութ խորշում անձավի,
¹⁰ ուր սարսափ ե, ուր սոսկում,—
արյունահոս թող ցավի
իմ մարմինը քո գրկում:

Յես քեզ մերժել չեմ կարող,
յես ամեն ինչ կըտամ քեզ.—
¹⁵ սեվ խորհուրդը մեզ գերող
յես գիտեմ յեվ դու գիտես...

¹ Յերգում ե քամին, լալիս ե նորից,
անհույս ու անվերջ մղկտում ե նա.—
այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա:

⁵ Իմ դուռն ե ծեծում քամին խոլական,
իմ պատերի տակ հեծում ե անվերջ,
մեղմիվ յերգում ե մեղեդին լալիս,
վունում ամայի փողոցների մեջ:

Փախչում ե հեռուն թռիչքով անտես,
¹⁰ դառնում ե անկարծ ճիչով խելազար,
ահարեկում ե յեվ կանչում ե քեզ,
հեծկտում ե խեղճ, անզո՞ր ու տկար...

Յեվ անպատմելի ցավով ե լցված
այդ յերգը անանց հուսահատության.—
¹⁵ մթին գիշերում իմ սիրտը խոցված,
լացը հուսաբեկ ավերված իմ տան...

Յերգում ե քամին, լալիս ե նորից,
անհույս ու անվերջ մղկտում ե նա.—
այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
²⁰ այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա...

¹ Անվերջ գիշերիս անամոքական մենակության մեջ
հետ կանչեցի քեզ, անդարձ որերի ցնորոտ յերկիր,—
ուղեցի վոր դու պայծառ ու մարուր լույսերով անշեց
յեվ խորհուրդներով դյութես վերստին սիրտըս տարագիր:
⁵ Յեվ իմ հոգու մեջ յես խենթ կանչեցի, ճշացի վհատ,
յերբ տեսա, ինչպես մեռած որերի խումբը դժնդակ
սահեց իմ առաջ, վորպես անիծված կյանքի մի հերյաթ—
յեվ յերազածըս թվաց նենգալի, չար յեվ այլանդակ:
Դառը մենության յեվ անհուսության մթին վիհերում
¹⁰ յես իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել, ։
սակայն մթնել եր, դառն եր յեվ դաժան անցյալի հեռուն.
—լուսեղեն հուշեր, դափաճանել եք ինձ դուք ե՛լ, դուք ե՛լ:

¹ Անհուսության մեջ, խավար որերում յեկավ նա ինձ մոտ,
նա ինձ մոտեցավ քնքույշ, փայփայող սիրո խոսքերով,—
շարժումների մեջ յեվ մութ աչքերում կար մի անծանոթ
վայելքի խոստում՝ անանց հիյացման գաղտնիքով գերող:

⁵ Յես հավատացի այն ժպիտներին յեվ այն մեղսական
փայփայանքները բախտ համարեցի իմ մենության մեջ.—
շուրջըս գիշեր եր, մուայլ եր շուրջըս իմ հոգու նըման—
յեվ նա եր շողում յերազի նըման խավարում անվերջ...

Կենթ հիյացումով արբեցի նրա տանջող գգվանքում
¹⁰ յեվ գերկը նրա թվաց ինձ յեղեմ, մեղքը—սոբազան...
Ո, դառը գիշեր, տանջանք ու թախիծ. եր արնոտ զրկում
փայփայում եր ինձ յեվ հեփիեվում եր յերկդեմ Մեղուզան:

¹ Այնպես անլույս ե այսոր
առավտուս լուսացել, —
սիրտըս հիվանդ ու անզոր
անլուսությամբ ե լցըել...

⁵ մութ ե հոգիս հոգնարեկ,
թախիծով լի յեվ անհույս. —
հրաշքով դու այսոր յեկ,
ժպտա, վորպես արշալոյս:

¹⁰ Հողմ ու անձրեվ շարունակ
իմ լուսամուտն են ծեծում, —
մի՛ թողնիր ինձ միյայնակ
անսահման այս կակիծում...

¹ Այսոր յեղիր քրոջ պես —
անչար, մաքուր յեվ գթոտ, —
զրկենք իրար ու նստենք,
նստենք մինչեվ առավոտ...

⁵ Այսոր յեղիր վորպես մայր —
բարի, քնքույշ, նրբազգաց, —
նստիր խաղաղ մահճիս մոտ,
մութ գիշերին հետըս լաց...

¹⁰ Ամոքիր դու իմ ցաված
սիրտը սիրով քո անբիծ, —
այն մոռացված, մոռացված
հեքյաթները պատմիր ինձ...

ՀԿ/ԿԱ/3

¹ Բուքն ե լալիս. հողմ ու ծյուն,
մառախուղ ե յեվ մշուշ. —
ո՞վ ե անվերջ հեծեծում,
ո՞վ ե կանչում այսպես ուշ:

⁵ Ո՞վ ե շրջում անդադար,
ո՞ւմ ե կանչում հիմա նա,
յես հեռու յեմ, յես ոտար,
ասացե՛ք՝ թող հեռանա...

Ասացե՛ք թող հեռանա,
¹⁰ թող մոռանա ինձ հավիտ, —
անդարձություն ե հիմա,
ըսկա դարձի արահետ:

Մեկը կորած շիրմիս մոտ
հեկեկում ե յեվ յերգում. —
¹⁵ ո՞ւմ լացն ե այն, ո՞ւմ ցավոտ
յերգն ե ներմակ մրրկում...

Իմ շիրիմը հեռավոր,
յեվ մոռացված, յեվ մենակ,
ո՞վ ե հուզում մենավոր
²⁰ իր թախիծով շարունակ:

Ոտար յերկրի դաշտերում,
ցուրտ գիշերում ծմեռվա
ո՞վ ե անքուն դեգերում,
անվերջ սգում իմ վրա...

¹ Մենակության մեջ, գիշերում անքուն,
հիշում եմ կրկին դաշտերը անծայր,
արտերի ծովը վսկեղեն, ծփուն —
յերեկոների հանգիստը պայծառ:
⁵ Յեվ իջնում ե մի անսահման թախիծ...
Հիշում եմ նորից որերըս մեռած,
տիրություններըս անույշ ու անբիծ
յեվ ընդմիշտ անդարձ անուրջ ու յերազ:
Հիշում եմ խոսքեր, ակնարկներ անծայն,
¹⁰ մի լրւսե պատկեր — ցնորք աղջկա,
այն ամենը, վոր յերազ եր միյայն,
այն ամենը, վոր հավիտյան ըլկա...

34 ԱԵՆԱՆ

¹ Նորից անծրեվ, մշուշ, ամալ,
թախիծ անհուն, տիսրանք հեղ,
աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
ի՞նչ խոսքերով յերգեմ քեզ...

⁵ Քո մշուշը, քո վոսկի
տերեմսերը հողմավար,
դյութանքը քո մեղմ խոսքի,
արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
¹⁰ Վհատությանն իմ խոնարի
յեվ թփերը դողդոցուն,
յեվ խոտերը գետնահար...

Յեվ քո յերգը թախծալի
իմ սրտի յերգն ե, կարծես,
¹⁵ աշուն, քաղցր ու բաղծալի,
ի՞նչ խոսքերով յերգեմ քեզ...

35

* *

¹ Հեկեկում ե անվերջ,
հեկեկում.
մենավոր ու լիատ
իմ հոգուն

⁵ հարազատ —
անհատնում, անպատում
կսկիծով
հեկեկում ե տրտում,
հեկեկում...

¹⁰ Մշուշոտ ու աղոտ որերում
գիշերները յերկար ու անքուն
փողցում, դաշտերում, անտառում, —
անամոք իմ հոգում,
անանուն յեվ անտուն, յեվ անքուն
¹⁵ մղկտում ե անվերջ,
հեկեկում, հեկեկում, հեկեկում...

¹ Շրջում եմ դարձյալ պուրակում այն հին
աշնան թախծալի յերգով որորված,
հողմը փռում ե տերեմները դեղին,
վորպես հուշերըս — յերազ ու մեռած:
² Մենակ եմ հիմա. յեվ դու, ո՞վ գիտե,
վո՞ր կողմերում ես — ժաղիտով անուշ —
նետում ծիծաղիդ կարկաչն արծաթե,
վառում հայացքիդ դյութանքը քնքույշ...
Յեվ գիտեմ, պիտի նորից հայտնվես,
¹⁰ հիշես խոսքերը վաղուց մոռացված, —
հրաշքին պիտի հավատամ յեվ յես
ու կրծքիդ դնեմ զլուխըս հոգնած...
Բայց յերբեք, յերբեք ել չի վառվելու
ցնորքըս մեռած, — պատկերըդ հեռու...

¹ Դու գալիս ես մութ գիշերապահին
յեվ լինում ես լուռ.
յես չեմ յիշեցնում ցնորքներըդ հին,
չեմ վրդովում քեզ խոսքերով տիսուր:

² Յես հասկանում եմ քո խենթ աչքերի
հըրեղեն լեզուն,
խոնարհ եմ լինում յես, վորպես գերի,
յեվ տրտմության սեվ խոսքեր չեմ ասում:

Վառվում ե մոմը դողդոց վայլերով
¹⁰ հեռու անկյունում, —
յելնում ես անխոս, հպարտ քայլերով,
մահապարտի պես այնտեղ ես գնում:

Յեվ շշնջում ե հագուստը թափվող
վարագույրի մոտ, —
¹⁵ փովում ե դառը ցնծության մի դող
ու վող աշխարհը դառնում ե աղոտ...

Կանգնում ես դու մերկ, թագուհիդ՝ խոնարհ,
իսկ յես՝ քո գերին.
քո թագավորն ու դահիճն եմ խավար
²⁰ յեվ սահման ըսկա չար տանջանքներին...

¹Մարդոց յերկրում անտարբեր,
ցուրտ աշխարհում, արդյոք ո՞վ
կընդունե ծեզ գգվանքով,
իմ յերազնե՛ր, իմ յերգե՛ր...

⁵Այս որերում ապական,
կյանքի անարգ խնճույքում —
ո՞վ կըզգվե կուսական
ծեր թախիծը իր հոգում:

¹⁰Ո՞վ վշտարեկ ու տրտում
կարձագանքե ծեր խոսքին, —
ծեր նվազը ցավագին
ո՞վ կը պահե իր սրտում...

¹⁵Ում համար եք դուք հնչում,
մեղեղիներ սգավոր, —
արդյոք ո՞վ կա հեռավոր,
վոր ծեր ցավով ե տանջվում...

¹Դանդաղ սահում են որերը դժկամ, —
անձրե՞վ ու քամի՛, — տրտո՞ւնց ու թախիծ,
լույսերը վոսկի ընկան ու հանգան —
ցաված ե սիրտը, — փայտայեցե՛ք ինձ...

⁵Լոել ե հեռվում յերգը ցնծության, —
յեվ գուցե ըլկար իմ ծնված ժամից,
գուցե յես ինքս եմ հնարել նրան,
Վոր սուտ հուշերով միսիթարեմ ինձ...

¹⁰Տխուր ամպերը կամար են կապել. —
անձրե՞վ ու քամի՛, — տրտո՞ւնց ու թախիծ. —
դուք կարող եք գեթ սուտ սիրով խարել —
հիվանդ ե սիրտը. — փայտայեցե՛ք ինձ...

¹ Ամայի փողոցում մեզ-մշուշ,
լուսթյուն ե մեռած.
կարոտ ե իմ սիրտը քո անուշ
գգվանքին, իմ յերա՛զ...

⁵ Հեռավոր կողմերից, հեռավոր,
հայտնվի՞ր լուսավառ,—
անհուն ե զիշերըս ահավոր,
յեվ դժնի՛, յեվ խավա՛ր:

¹⁰ Իմ սերը անարատ ե ու խոր,
իմ հոգին՝ հնազանդ,—
ամոքիր իմ սիրտը մննավոր,
իմ թախիծը հիվանդ:

Մահից չեմ վախենում, գալիքին
նայում եմ հավատով,
¹⁵ կարոտ ե սիրտըս քո հմայքին
մաքուր ու հոգեթով:

Աղոթքըս պարզ ե յեվ նրբահյուս,—
մեռնողի վերջին կա՞նչ—
հայտնվիր, վորակես լույս-արշալույս,
²⁰ իմ հոգուն մահատանջ...

Ամայի փողոցում մեզ-մշուշ,
լուսթյուն ե մեռած.—
հայտնվիր հմայքով քո անուշ,
իմ յերա՛զ, իմ յերա՛զ...

Տարիներն արագ, ամպերի նման, անցնում են անհետ,—
մոխիր ե հիմա իմ հոգում անուշ յերազների տեղ.
բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այստեղ,
յեվ այն, ինչ քաղցր եր, մաքուր եր, յերազ,—ննջել ե հավետ:

Յերկար տարիներ իրարից բաժան, հեռու կողմերում,
դու ինձ մոռացած, յես քեզ հիշելով, կյանք եյինք մաշում.
դու ցնո՞րք, յերա՛զ, անհաս թագուհի,— յես յերկը փոշում,
յես մեռա՛ծ, կորա՛ծ, մոլորվա՛ծ հավետ հեռավոր-հեռվում...

ՎՈՍԿԻ ՏԵՐՅԱԹ

И новый мир увидел я . . .

Ф. Тютчев.

1 Հոգնատանց սրտով նստեցի մենակ
 աշխարհում աղոտ.
 անհայտ կողմերի մութ ճանապարհին,
 ավեր շենքերի մոխիրների մոտ,
 աշնան որերի գունատ մահացող
 ծաղիկների մեջ, ցուրտ հողի վրա,
 ծանր յերկնքի տաղտկորեն լացող
 անծրեխների տակ.—
 մոռացա բոլոր հոգսերն առորյա,
 40 ցանկություններըս ապարդյուն ու սին,
 անմիտ յեվ ունայն տենչերիս ուղին,
 սուտ վարդերն ու սուր փշերը նրա
 մերժեցի ընդմիշտ, մատնեցի մահին,
 անդարձ մոռացա...

15 Յեվ խավարն անհուն, գիշերն անթափանց
 իր լայն թեփերը փուեց իմ վրա...

Լուսեղեն յեվ սուրբ սիրո յերազը
 խավարտչին կյանքում
 յեվ յերջանկության ցնորքներըս հին,
 20 յեվ տառապանքի գիշերներն անքուն
 իմ սրտին ընդմիշտ ոտար թվացին,
 ոտար թվացին...

Յեվ չըկար վոչինչ, վոր սիրտըս դյութեր,—
 վո՛չ սիրո կարոտ, վո՛չ բախտի ծառավ,
 25 վո՛չ հարստության յեվ մնծության բեռ,
 վո՛չ ապարդյուն փառք յեվ վո՛չ փայփայող

ու սրբազան ցավ

չարչարանքի յեվ ինքնազոհության:

Յեվ այսպես անգույն, անմիտ, ապարդյուն,
տաղտկալի՛ յեվ սի՞ն

թվաց ամեն ինչ աշխարհում անհուն,
յեվ ամենքն ընդմիշտ ոտար թվացին
յեվ անդարձ հեռու...

Քար եր իմ սրտում յեվ ծա՞նը, յեվ ցուրտ,
յեվ աշխարհն եր քար՝ ստոն ու անխորհուրդ...
Յերկինքն եր լալիս պաղ արցունքներով,
լալիս ելի յես՝ մերժված ու խռով,
յեվ ցուրտ աշխարհում
ինքըս իմ սրտին հարազատ չելի—

40 ու ծաղը եր թվում հեկեկանքըս չոր...
Յես լալիս ելի,
բայց ոտարի պես ելի ունկնդրում
ինքըս իմ հոգուն, ինքըս իմ լացին,
45 ու մութ եր շուրջըս յեվ խավարն անհուն,—

իմ խարված սրտում՝ մթամած գիշեր,
յեվ պաղ, յեվ ծանըր, ծանըր վորպես քար,
յեվ տաղտկությամբ լի յեվ անվերջ յերկար,
անծիր ու անհուն—

50 ու վոչ մի հեռվում լույս չելի վինտուում...
Յեվ համը եր ընդմիշտ աշխարհն ինձ համար—
յեվ ոտար, յեվ մութ.—
յես ընկած ելի անզոր ու մոլոր
յեվ հավետ մենակ յեվ անդարձ մենակ,
55 անանուն, անհայտ, անծանոթ հեռվում...

Մվ ազատություն հավիտենական,

մա՞ն, շշնջացին շուրթերս տկար,
յեվ այդ շշուկը դառը չըթվաց.

գրկեցի հողը մի ցուրտ ցանկությամբ,
60 յեվ նա իմ առաջ բացեց իր գիրկը
անսուտ գգվանքով.

յեվ գերեզմանի խորշը ցրտաշունչ
անուշ թվաց ինձ,
վորպես մայրական գիրկը սրտամոք
65 պայծառ որերում,
վորպես հեռափոր յերկրում մոռացված,
մայրական յերգի սիրով որորվող
թովիչ որորան...—

Մա՞ն, շշնջացի, յեվ սիրտըս նրան
70 ընդունեց սիրով, վորպես գթառատ
հեկեկանքը մեր նուրբ կարեկցության.
յեվ հեռացա յես ու հեռացա յես
մի անհայտ կամքի զորությամբ անուշ
հեռուն ու հեռուն.—

75 վողը մոռացա ոտար աշխարհում...

Ու խավարն անհուն գգվանքով թեթեվ
ծափալից շուրջըս ու փոփեց վրաս,
յեվ կյանքըս բոլոր մի յերկարատեվ
80 նինջ թվաց հոգուս, մի տխուր յերազ,—
նրբին մի համբույր հեռու որերում,
մանկական մի յերգ վոր չունի անուն,
վոր չունի անուն...—

Ինձ ահեղ թվաց խնդությունըս նոր,

85 կարծես մի վերին յեվ նուրբ հրաշքով
 լուսացավ իմ մեջ առավոտն անհուն—
 ու թեթեվ թվաց կյանքըս յերկրային,
 վորպէս առվակը սարերից իջնող,
 վորպէս ամպերի շարքը փոսկեղեն
 90 գարնան արեվող յերկնքում չվող...
 ու թվաց հանկարծ, վոր չըկան, չըկան
 անցյալն, ապագան...
 թվաց վոր մի սիրտ իմ վիշտն ե զգվում,
 հանգիստ ե ասում բոլոր հույզերին,
 95 բոլոր հույսերին որոր ե ասում,
 որոր ե ասում,
 բարխուն սիրտըս գրկել ե ուզում;
 զգվել ե ուզում
 անխար խնդության վոսկե յերազում...
 100 թվաց, վոր մեկը իմ ցանչն ե յերգում,
 իմ լացն ե լսում,
 իմ լոռությունն ե զգվում իր գրկում.—
 յեվ իր մեծ հոգում,
 իր անհուն հոգում
 105 իմ սրտից խորն ե թախիծըս զգում...
 Ճիչ հանեցի յես սիրով լուսեղին,
 աղաղակեցի որհներգու ծայնով,
 սիրտըս նստեցի քարին ու ջրին,
 խառնեցի հոգիս աստղերի յերգին,
 պարզեցի կյանքըս պարզ ու խնդագին
 հավիտենության,
 հավիտենության...

1 Քնքույշ փուփած ե լուսազարդ շղարշ
 անհայտ կողմերից իմ յերկրի վրա.
 դյութել ե հոգիս հայացքը նրա
 յեվ իմ յերգերը համը են ու անվարժ...

2 Բացված ե արդեն մի ուրիշ յերկիր,
 յես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,—
 վոսկի հայացքով կախարդել ե նա,
 այլ սիրով լցրել հոգիս վշտակիր...

3 Բաց ե իմ դողդոց սիրտը նրա դէմ,
 խոցված ե վոսկի շողերով նրա.—
 նրա կնիքն ե ի / հոգու վրա—
 յեվ յես հավիտյան ուրիշ եմ արդեն...

¹ Արշալուսեց իմ յերկիրն աղոտ
յեվ իմ գիշերը սեվավորված,—
խորհրդավոր եր յեվ արեվոտ,
յեվ անհուն նրա հայացքը պարզ:

⁵ Շուրջըս մռայլ եր, յեվ հեռուն մութ,—
նա իմ սեվ կյանքում վառեց մի հուր,—
ամեն ինչ թվաց հեքյաթ ու սուտ,
ըզգիտեմ՝ յե՞րբ եր, ըզգիտեմ՝ ուր...

Նրա խոսքերի մեղմ որորում
¹⁰ աշխարհը թվաց ինձ անեղերը,—
կարծես հնչում եր իմ որերում
աստղերի յերկրում հյուսված մի յերգ...

Վոսկի հայացքով ինձ պարուրեց,
խաղաղ ժպիտը փոեց վրաս,
¹⁵ մեղմիվ խոսեց յեվ անուշ լոեց
ու թախծոտ կյանքըս դարձավ յերազ...

4 ԳԻՇԵՐԱՄՈՒՏ

¹ Մարգերում իջավ թովիչ կիսամութ,—
աշխարհը նորից խորունկ ե յեվ լայն.
սահեց լուսնյակի ցոլքը ծածանուտ
ու սեվ ջրերում աստղերը յիլան...

⁵ Անհաս յերկնքից ասեղ առ ասեղ
ցուրտ ջրերի մեջ սուզվեցին նորա,—
դողացին, ընկան—այնտեղ ու այստեղ,
հյուսեցին իրենց ցրջանը վոսկյա...

Լսե՞լ ես արդյոք այս յերգը քնքույշ,
¹⁰ վոր մեղմակարկաչ խոսում ե չորս դին,
իրար ե խառնում յերազ ու վերհուշ
ու միրտըդ պարզում քարին ու խոտին...

Լսե՞լ ես արդյոք այս յերգը դյութող,
յերբ այրում ե քեզ մի անուշ թախիծ,
¹⁵ յերբ քարն ես զրկում, որհնում ջուր ու հող,
յերբ հեկեկում ես անբարբառ բախտից...

* *

¹ Խոսքերըդ վճիտ են ու խորունկ,—
այնպես պարզ, այնպես պարզ ես ժապում.
յեվ ահա տրտունջ ու մտորմունք
հանգչում են մրրկված իմ արտում...

⁵ Ընդունում ես աշխարհը բոլոր,—
որինում ես, որիներգում ու սիրում,
յեվ խոհերըս, խոհերըս մոլոր
մոռացված են մեռած որերում:

Ու թվում ե, թվում, վոր դու չես
¹⁰ արեվող ժափտով ակնարկում,
վոր ուրիշ լուսով եմ դյութված յես,
վոր քեզ չեմ, ուրիշին յեմ յերգում...

6 ԳԱՐՆԱՆ ՑԵՐԵԿՈ

¹ Անհուն յերկնքի կապույտ աշխարհում
մի քնքույշ թռչուն իր նուրբ ու բարակ
թեվերն ե փռում.
յեվ մեկը անտես, շարժումով արագ,
⁵ վոսկի յե մաղում, գոհար ե ցրում
կապույտ դաշտերում...

Սյրում են սիրտըս անբարբառ յերգեր,
դողում են շուրջըս անխոս, դյութական
յեվ նրբին ձեռքեր
¹⁰ ինձ են վորոնում տենչով կուսական...
Լո՛ւռ... Սիրո համար ել չըկան յերգեր,
ել խոսքեր չըկան...

¹ Վոսկեցոլուն հայացքիդ
լույսն ե ցոլում այս կյանքում,
քրոջական պարզ հոգիդ
միշտ փարված ե իմ հոգուն:

² Միշտ հնչում ե միյամիտ
քո խոսքերի նուրբ լեզուն,—
քո ժպիտն և անժպիտ
ուղիներըս փարոսում:

³ Քո զգվանքը, վոր չըկա,
¹⁰ տրտմությունըդ գեղեցիկ,
հոյ լզըդ մարուր աղջկա,
ժպիտներըդ խաբուսիկ:

⁴ Ո՞ւր ես, ո՞ւր ես՝ չըզիտեմ,
բայց ըզգում եմ ամենուր
¹⁵ քո ըստվերը լուսեղեն,
քո հայացքը վոսկեհուր...

⁵ Եռ յես ամեն իրիկուն
խոցում սիրտըս քո սրով
յեվ ժպտում ես իմ հոգուն
²⁰ յեվ ամոքում քո սիրով:

Վոսկեցոլուն հայացքիդ
լույսն ե ցոլում այս կյանքում,
քրոջական պարզ հոգիդ
միշտ փարված ե իմ հոգուն...

¹ Այստեղ ամեն որ տիսրությամբ յերկար
իմ սիրտը քեզ ե յերազում յեվ այն,
յեվ այն, վոր չըկար, յեվ այն, վոր չըկար...
Այս գուցե կար, բայց արդեն հավիտյան,
⁵ հավիտյան հեռու, հեռու յէ անհաս—
յեվ դարձել ե սուտ, թվում ե յերազ...

* *

- ¹ Զըգիտեմ՝ այս տիսուր աշխարհում
վո՞րն ե լավ, վո՞րը՝ վատ,
յես սիրում եմ աչքերըդ խորհուն
յեվ խոսքերըդ վհատ...
³ Յես սիրում եմ արտերը վոսկի
յեվ դաշտերը պայծառ,
յես սիրում եմ խորհուրդն այն խոսքի
վոր չասիր ու անցար...
⁴⁰ Միյայնակ՝ յես սիրում եմ նստել
յերերուն լույսերում,
յես սիրում եմ յերազ ու ըստվեր.—
յես իմ սերն յեմ սիրում...

* *

- ✓ ⁴ Սիրում յեմ աչքերիդ տիսրությունը խորին,
անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
կուսական ամոթիսած փայտայանքըդ, վոր իմ
սեվ որերն ե որրում խնդությամբ ճնազանդ:
⁵ Խոսքերըդ կարկաչող, վորպես նուրբ մի զգեստ,
ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն,—
քո հոգին չի սիրում մերկություն անհամեստ,—
դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում:
Հեռավոր յերկրի պես հմայող ե հոգիդ,
⁴⁰ անուշ են խոսքերըդ, ժախտներդ աղջկա,—
մանկական անպահույն յերգի պես միյամիտ,
դլութական, վորպես այն, վոր չըկա, որ չըկա...

¹ Արծաթաշող առուն առվին
ծայն ե տալիս ու յերգում,
անտրտունց ե լալկան ուռին,
ուռին առվի յեզերքում...

⁵ Շուրջըս ահա զիշեր ու յերգ —
հանգիստ, հեքամթ ու յերազ.
Կույս-ամպերը՝ ճերմակ ու մերկ,
աստղերն՝ անուշ, հեզանազ:

¹⁰ Սիրտ իմ հոգնած, մեղմ որհներգիր,
հնազանդ ու ցնորուն,
յերկին ու ծով, ամպ ու յերկիր,
այս մարգերն ու այս առուն:

¹⁵ Ցեղիր դու յել պայծառ ու հեզ, —
հեքյաթ, հանգիստ ու յերազ,
ծալկանց ու կույս ամպերի պես,
աստղերի պես հեզանազ...

Արծաթաշող առուն առվին
ծայն ե տալիս ու յերգում,
²⁰ անտրտունց ե լալկան ուռին,
ուռին առվի յեզերքում...

¹ Յես չեմ հեշում, յերբ յեվ ո՞ւր
հանդիպեցի քեզ ու դու
վրդովեցիր համր ու լուռ
հանգստությունն իմ հոգու...

⁵ Գիտեմ, զիտեմ այս աղոտ
յերկրում քեզ չեմ գտնելու, —
դու անհայտ ես, անծանոթ,
դու հեռո՞ւ յես, դո՞ւ հեռու...

*
**

¹ Դու յեկար սպիտակ շորերով,
յերբ ծմբան յերեկոն իմ սրտում
եր թախիծն եր փռում ու տըտում
ժպտում եր մշուշոտ շողերով...

⁵ Յեվ այնպես անվերջ եր ու դանդաղ
գիշերիս տաղտկությունը մեռած,
յերբ քնքույշ նետեցիր դու վրաս
մի անուշ, արքեցնող շամանդաղ.

¹⁰ Փողոցում ձայն չըկա, յեվ իմ տան
դռները յես ամուր եմ փակել.
միյայն դու կարող ես ինձ փրկել
որերից հուսաբեկ ու տարտամ:

¹⁵ Ցաված ե իմ հոգին ու մենակ —
ձանձրությամբ ե լցված մահացու,
յեվ դառն ե անունն իմ աստղծու,
յեվ աղոթքը՝ թունոտ մի դանակ...

²⁰ Հայտնվի՞ր լուսեղեն ու գերող,
քո փայլը ծավալիր սեվ կյանքում,
ամոքի՛ր գիշերներըս անքուն
քո մաքուր, քո անուշ յերգերով...

¹ Դուրս յելա դաշտ —
կանաչ ծով,
կանաչ ծով եր, անափ ծով. —
առավոտն եր ժպտում հաշտ,
⁵ բոցավառվում նոր բոցով...

¹⁰ Յեվ ուղիներ բյուրավոր, —
հեռավոր,
կանչում եին, ակնարկում. —
նոր եր սերըս, լայն ու խոր, —
¹⁵ նոր եր աշխարհն իմ հոգում....

¹⁰ Թողի տնակն իմ ավեր,
մութ ու հին —
ու հեռացա խնդագին. —
անհայտ, անհուն հեռուներ,
¹⁵ ծեր գիրկն առեք իմ հոգին....

¹Մեղմիկ փովեց քնքույշ մութ—
խորհրդավոր, թափանցիկ,
յերեկոներ իմ կապույտ,
յերազներ իմ փութանցիկ...

⁵Ժանյակները լուսազարդ
լայն յերկնքի ծովերում
հյուսվածներով անավարտ
մոռացումս են որորում...

¹⁰Ժաղկունիկ խաղացկուն
յերգն ե ծուլվել իմ կյանքին,—
սեր ու յերգ ե իմ հոգում,
սիրո յերգ ե իմ հոգին...

¹⁵Իմ սիրո պես խոր ու մեծ
շուրջըս աշխարհն ե ծփում.—
¹⁶Վոսկի հերյա՛թ, ո՞վ պատմեց
քեզ կախարդված իմ հոգուն...

Մեղմիկ փովեց քնքույշ մութ,
խորհրդավոր թափանցիկ,
յերեկոներ իմ կապույտ,
յերազներ իմ փութանցիկ...

Մթնշաղալին ժամնրին, յերբ յես
ընկնում եմ, հոգնած որորից ունայն,
հայտնվում յես դու նուրբ ու լուսերերս
ու հետըս նստում քնքշությամբ անձայն—
յեվ փայփայում ես, որորում ես քո
անխոս զգվանքով ամեն յերեկո...

Հնդունում եմ քո համբույրը նրբին,
ուրվականալին փայփայանքը յես,
յերբ լուս ե յեվ մութ—մթնշաղ, յերբ իմ
ցնորքը հիվանդ հնազանդ ե քեզ.
ու քեզ հետ նստած, զիտեմ, —դու չես այն,
ըստվերդ ե միյայն, ըստվերդ ե միյայն...

* *

¹ Դու հասկացար տագնապները իմ հոգու,
արտմությունըս անսպառ.
—մենք առհավետ շղթայված ենք մեկ-մեկու:
Կյանքըս մութ եր, հոգիս ցաված ու խավար,
յեվ որերըս—միյայն ցավ.
—իմ սել յերկըում ժպտացիր դու լուսավառ...
Յեվ քո փայլով իմ աշխարհը լուսացավ,
ըլկա վիհերն եր անյել.
¹⁰ —քաղցր ե հիմա, լուսավառված, խինդ ու ցավ.
—ո՞վ կարող ե ինձ քեզանից բաժանել...

* *

¹ Գարնան լուսե ամպի նման՝
այս խավար կյանքում
դու նետել ես մի թովչական
ժպիտ իմ հոգուն:
⁵ Մոլոր սրտիս տառապանքի
անլույս աշխարհում
դու վառել ես մի այլ կյանքի
արեվոտ հեռուն:
¹⁰ Դրոշմել ես բոցե կնիք
մեռած իմ հոգում.
դո՛ւ իմ հավատ, իմ հայրենիք,
դո՛ւ իմ փրկություն...

¹ Դու խոսում ես, բայց կարծես,
դու չես, գիշերն ե յերգում.
այնպես նուրբ յես յեվ այնպես
մեղմ յես, մեղմ յես ինձ գրկում...

² Լուսեղին ե խոսքերիդ
իմաստը պարզ ու խորունկ,
վորպես մեղմ ու անառիթ
գարնահ անուշ մտորմունք...

³ Յեվ անդոքք ե ծայնը քո,
¹⁰ հաշու ե թախծոտ իր շեշտով,
վորպես անուշ յերեկո՝
մեր սիրով ու վշտով:

Դու չես, դու չես,—նեռալոր
վարդենիներն են շրշում,
¹⁵ ծովս ե յերգում լայն ու խոր
վոսկեպայծառ մշուշում...

Իմաստոն ե յեվ արդար
որերի յերգն անընդհատ,—
դառը տանջանք ու դադար
²⁰ յեվ սեր, յեվ վիշտ, յեվ հերյալթ...

Գիշեր, գիշեր, լուսություն,
անուշ թախծի լուսե յերգ.
վուվի՞ր, վուվի՞ր իմ հոգում,
խաղաղություն անեղերք...

20 ԳԱՐՆԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

¹ Լցվում ե փողոցն աղմուկ ու շարժում,
դալուկ դեմքերին ծաղկում ե ժպիտ,
փայլում են տներն արեվի փոշում,
յերկինք են պարզվում ծառերը վտիտ...
² Դեռ ըլքորացած բուլվարի վրա
ճշում են զվարթ մանուկներն արդեն.
բոլոր խոսքերը խորհուրդ են հիմա
յեվ հայացքները նետ են իրար դեմ...
Մայթի քարերը հարազատ են քեզ—
¹⁰ քեզ նոր ե թվում յերգու հնամյա.
ազատ ե հոգիդ, անչար ե յեվ հեզ,
յեվ տիսրությունը անուշ ե հիմա...
Ժպտուն աղջիկներ՝ ծաղիկների պիս,
տիկիններ շքեղ յեվ ծիծաղելի—
¹⁵ բոլորը հիմա սիրելի յեն քեզ,
ամեն ինչ անուշ խորհուրդով ե լի...
Մեռած սրտերն ել, ծաղիկների պիս,
բացվում են հիմա արեվի փոշում.
մի քաղցր հուզում արբեցնում ե քեզ,
²⁰ ու, հոգսով մղված՝ հոգսըդ չես հիշում...
Որհնություն քեզ յերգ, յեվ յերա՛զ, յեվ սե՛ր,
որհնություն քեզ կյա՛նք, անուշ յեվ անհուն,
որհնություն յեվ քե՛զ, տանջանքի գիշեր,
յեվ յերկո՛ւնք, յեվ մա՛հ—փա՛ռք յեվ որհնություն...

Դու չքացել ես,
 դու ել չըկաս,
 սերը՝ ցնորք ե,
 բախտը՝ յերազ:

 Քեզ չըգտա յես
 կյանքում խավար,—
 իմ սիրո լույսն եր
 պատկերդ վառ:

 Բաղը պատրանք եր,
 խաբող ժպիտ,—
 կարոտիս յերգն եր
 պայծառ հոգիդ:

 Սրտիս յերազն եր
 թովիչ լեզուդ.—
 կյանքը՝ հերյա՛թ ե,
 աշխարհը՝ սո՛ւտ...

¹ Սին խոսքերի մեջ, զվարթ ամբոխում
 շրջում եմ, բայց միշտ հեռո՛ւ յեմ, չըկա՞մ.
 ապրում եմ թագուն յեվ իմ հեզ հոգում
 աղոթք եմ անում ցնորք-աղջկան...

⁵ Զեզ հետ եմ, բայց միշտ հեռո՛ւն եմ, հեռո՞ւն,—
 ունեմ յես թովիչ մի առանձնարան,—
 տանջանք ե այնտեղ յեվ զոհաբերում,
 յեվ թախիծ, յեվ յերգ, յեվ աղոթք նրան...

 Յեվ այնտեղ ե նա, —վոչ այս աշխարհում,—
¹⁰ մաքուր ու պայծառ պատկերը նրա.
 յես տառապանքս բախտ եմ համարդում
 ու ծիծալում եմ ծեր բախտի վրա...

23 ԹԱՓԱՌՈՒՄԻ ՍԵՐ

¹ Կըշարժեմ նորից քայլերս տարսամ,
լավտերների հեզ լույսը կըգրկեմ,
զվարթ անցորդին ուրախ կըժպամ,
ինքը ինձ կերգեմ...

